**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ**
**ՆԱԽԱԳԱՀ**

**2023 թվականի փետրվարի 28-ի**

# ՌՈՅԱԼԹԻ ՎՃԱՐՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԵՎԷ ՕՐՎԱՆԻՑ ԱՆՈՐՈՇ ԿԱՄ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**N 23-Ն**

## ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքի 13.8-րդ հոդվածի 3-րդ մասը՝

***Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ  ԵՄ՝***

1. Սահմանել ռոյալթի վճարողի գործունեությունը որևէ օրվանից անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցնելու և (կամ) գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2023 թվականի փետրվարի 28**

**ք. Ստեփանակերտ**

Հավելված
Արցախի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2023 թվականի փետրվարի 28-ի
N 23-Ն հրամանի

**Ձև**

| **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՅԱԼԹԻ ՎՃԱՐՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԵՎԷ ՕՐՎԱՆԻՑ ԱՆՈՐՈՇ ԿԱՄ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ** | Փաստաթղթի հերթական համարը<br>______________________<br>(լրացվում է հարկային մարմնի կողմից) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Ռոյալթի վճարողի անվանումը | | | | | | | | |
| 2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |
| 3. Ռոյալթի վճարողի գտնվելու վայրը | | | | | | | | |
| 4. Ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | | | | | | | | |

1-ին կետում լրացվում են ռոյալթի վճարողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը:

2-րդ կետում լրացվում է  հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

3-րդ կետում լրացվում է ռոյալթի վճարողի գտնվելու վայրը:

4-րդ կետում լրացվում են ռոյալթի վճարողի կողմից հարկային մարմին հայտարարության ներկայացման ամսաթիվը, ամիսը և տարեթիվը:

| |
|---|
| 5. Հայտնում եմ, որ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքի 13.8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝<br>1) 20__թ. __________________ ______-ից անորոշ ժամկետով դադարեցնում եմ գործունեությունը.<br>2) 20__թ. ___________ ___-ից դադարեցնում եմ գործունեությունը և կվերսկսեմ գործունեությունը 20___թ. ______________ ___-ից.<br>3) 20__թ. __________________ ____-ից վերսկսում եմ գործունեությունը: |

5-րդ կետի 1-ին ենթակետը լրացվում է, եթե ռոյալթի վճարողի կողմից հայտարարությունը ներկայացվում է գործունեությունն անորոշ ժամկետով դադարեցնելու համար, 2-րդ ենթակետը լրացվում է, եթե ռոյալթի վճարողի կողմից հայտարարությունը ներկայացվում է գործունեությունը որոշակի ժամկետով դադարեցնելու համար, իսկ 3-րդ ենթակետը լրացվում է, եթե ռոյալթի վճարողի կողմից նախապես տրվել է հայտարարություն, որտեղ լրացված է եղել հայտարարության 5-րդ կետի 1-ին ենթակետը:

Գործադիր մարմին ________________________ ______________________________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**Կ.Տ.**

Հաշվապահ ________________________ ______________________________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում հայտարարությունը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է ռոյալթի վճարողին: